Doi: 10.56737/2953-7843-2023.08-188

ՀԱՍՄԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ
ՄՄ

ՍԵՒ ԼԵՌՆԵՐԻ ՇՈՒԽՐ ԽԱՆԴԱՌԵԱ ՎԱՆՔԸ ԵՒ 1064 Թ. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻ ՄԱՍԻՆ[1]

Միջնադարյան հայկական եւ օտարալեզու սկզբնաղբյուրներում ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում Անտիոքին սահմանակից Կիլիկյան Հայաստանի Սեւ լեռների (Ամանոսի) կամ, ինչպես արաբագիր հեղինակներն են երբեմն անվանել, «Հայկական լեռների»[2] շրջակայքում տեղակայված բազմաթիվ հայկական վանքերի[3], եկեղեցիների, անապատների, դրանց անունների, ճարտարապետական առանձնահատկությունների մասին։ Արաբական սկզբնաղբյուրները տվյալներ են հայտնում վերոհիշյալ կրոնական հաստատություններում բնակվող ճգնավորների ու քահանաների մասին[4]։ Համաձայն այդ վկայությունների, Սեւ լեռներում գործել են 700 հայկական վանքեր՝ «բնակեցված» 700 եւ ավելի հոգեւորականներով։ Պահպանված տեղեկություններից պարզ է դառնում, որ հայկական վանքերից յուրաքանչյուրը շրջապատված է եղել պարսպով, ունեցել է աշտարակ եւ վանականների բնակության համար կառուցված կացարաններ[5]։ Այդ տարածքում եղել են նաեւ վանքեր, որտեղ սպասավորել են քիչ թվով (10 անդամ) վանականներ[6]։ Վկայու-

---

[1] *Ստացվել է՝ 4.04.2023, գրախոսվել է՝ 10.04.2023։ Էլ. հասցե՝* hasbadalyan@gmail.com։

[2] Տե՛ս Գ. Դանիելյան, *Հայկական վանքերի եւ եկեղեցիների հիշատակություններ Աբու Ալ-Մաքարիմի երկի անհայտ էջերում, Երեւան, 2018, ԲՄ, 26, էջ 41։*

[3] J. J. S. Weitenberg, The Armenian Monasteries in the Black Mountain, in: K. N. Cigaar, D. M. Metcalf (ed.), East and West in the Medieval Eastern Mediterranean. I.Antioch from the Byzantine Reconquest until the end of the Crusader Principality. Acta of the Congress held at Hernen Castle in May 2003 (Orientalia Lovaniensia Analecta, 147), Leuven – Paris – Dudley/MA, 2006, p. 79–93։ Գ. Դանիելյան, *նշ. աշխ., էջ 27–28։*

[4] Ըստ արաբական աղբյուրի վկայության՝ «անհաշվելի» թվով վանականներ բնակվել են նաեւ Անտիոքի շրջակայքում, Կեսարիայում, Մարաշում, Տարսոնում եւ այլ վայրերում (տե՛ս Գ. Դանիելյան, *նշ. աշխ., էջ 41–42)։*

[5] Նույն տեղում։

[6] Նույն տեղում, էջ 42։ Սկզբնաղբյուրային սուղ տեղեկությունների պատճառով վանքերի մեծ մասի տեղադրությունն ու անվանումներն անհայտ են։

թյունների հավաստիության վերաբերյալ կարծում ենք՝ աղբյուրներում հիշատակված վանքերի թվաքանակը չափազանցված է, սակայն այն հիմք է տալիս ենթադրելու, որ տարածքում եղել են մեծ թվով հայկական վանքեր, որտեղ բնակվել են բազմաթիվ հայ հոգեւորականներ։

Սեւ լեռների վանականների ու մենաստանների ճգնավորների «բազմության» մասին հաղորդում ունի նաեւ Արիստակես Լաստիվերցին, ըստ որի 1028 թ. Ռոմանոս կայսրը՝ «եկեալ հանդիպի լերինն, որ կոչի Սեաւ, եւ տեսանէ անդ բազմութիւն վանորէից եւ զմենաստանս մենակեցաց, որք ի մարմնի գոլով զանմարմնոցն բերէին զնմանութիւն։ Որք միով այծէիւ կամ բաճկոնաւ շատանան... սոքա երկաթի բրիչ ի ձեռն առեալ՝ խոնջեալ աշխատին ի գարի սերմանեաց պատրաստեալ զօրապահիկն կերակուր»[7]։ Սեւ լեռների «անթիւ» վանքերի ու «բազում» կրոնավորների մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Յասմ ժամանակիս (1066 թ.–Հ. Բ.) զօրաժողով արար ամիրայն Պարսից՝ որ ասի Օշէն... Եւ գայր խաղայր բազմութեամբ զօրօք եւ արար ձմերոց ի Սեւ լեառն. եւ ահագին արեան հեղութիւն եւ կոտորած լինէր յամենայն գաւառն, եւ բազում անձինք ի սրբոց կրօնաւորացն մատնեցան ի բերան սրոյ... անթիւ վանորայք եւ գեղք այրեցան հրով...»[8]։ ՄՄ թ. 1530 ձեռագրի (1154 թ.) հիշատակարանը հայտնում է. «Գնաց... ի յաշխարհն Կիլիկեցւոց եւ եմուտ ի Սեաւ լեառնն, ուր էին բազում անապատք եւ վանորայք...»[9]։

Համաձայն աղբյուրների հաղորդումների, ԺԱ.–ԺԲ. դարերում Սեւ լեռներում գործել են նաեւ ասորական, հունական, լատինական եւ վրացական վանքեր[10]։ Չնայած դավանաբանական տարակարծություններին՝ բազմազգ վանականները բնակվել են կողք կողքի եւ համագործակցել։ Եկեղեցական համայնքների համագործակցության ու փոխազդեցության արդյունքում վանականության կյանքում ձեւավորվել է մտածողության,

---

[7] *Տե՛ս «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Երեւան, 1963, էջ 42–43)։*

[8] *Տե՛ս* Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ՝ Հր. Բարթիկյանի (այսուհետ՝* Մատթէոս Ուռհայեցի*), Երեւան, 1973, էջ 200։*

[9] *Տե՛ս* Ա. Մաթեւոսյան, *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե.–ԺԲ. դդ. (այսուհետ՝ Հիշ.), Երեւան, 1988, էջ 171։*

[10] *969–1084 թթ. Սեւ լեռների՝ որպես հույն, վրացի, հայ վանականների բնակատեղիի, բյուզանդական վանական կյանքի, գիտական գործունեության ու ծաղկող մշակույթի կենտրոնի մասին տե՛ս* Joe Glynias, Byzantine Monasticism on the Black Mountain West of Antioch in the 10'-11 Centuries, Studies in Late Antiquity, 2020, vol. 6, issue 4, pp. 408–451*։ Սեւ լեռների տեղագրության, վանքերի, վանական բնակչության մասին տե՛ս Կ. Մութաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, թարգմ.՝ Ա. Շահումյան, Երեւան, 2001, էջ 312–315։*

կրթության, գիտության, արվեստի զարգացման որոշակի մակարդակ։ Այս մթնոլորտը բարենպաստ ազդեցություն է ունեցել հայ վանական, հետագայում Կիլիկիայի հայկական մշակույթի վրա[11]։

ԺԱ. դարավերջից եւ ԺԲ. դարասկզբից կիլիկյան հայկական պետության հիմնադիր Ռուբինյանների իշխանապետության ժամանակաշրջանում Սեւ լեռների հայկական վանքերում, նաեւ իշխանական աջակցությամբ եւ հովանավորությամբ, հիմնադրվել են դպրոցներ ու վարդապետարաններ, կազմավորվել միաբանություններ։ Այս կենտրոններում կրթվել կամ գործել են հոգեւորականներ, քաղաքական, գիտական ու մշակութային գործիչներ։ Նրանց թվում են Գրիգոր Բ Վկայասերը, Գրիգոր Պահլավունին, Իգնատիոս Սելեւնեցին, Ներսես Լամբրոնացին, Ներսես Շնորհալին, Մխիթար Գոշը, Գեւորգ Մեղրիկը, Գրիգոր Լոռեցին, Կիրակոս գիտնականը եւ ուրիշներ։

Սեւ լեռների հայկական վանքերից հիշվում են Պառլահոնը, Արեգը, Շուղրը, Վարդկանը, Մաշկեւորը, Քարաշիթը, Հեսվանցը ինչպես նաեւ Բարսեղյանց, Շափիրի եւ Պաղակձիակ կենտրոնները[12]։ Գրչարվեստի պատմության տեսակետից հետաքրքրական է յուրաքանչյուր վանքի պատմության, գործունեության եւ գրչական ժառանգության ուսումնասիրությունը։ Ներկա հոդվածում հայագիտության մեջ հայտնի եւ նոր սկզբնաղբյուրների ու նյութերի հիման վրա ներկայացնում ենք Սեւ լեռների վանական մշակութային օջախներից Շուխր խանդառեա վանքի պատմության ու գրատան գործունեության ուսումնասիրությունը։

Շուխր խանդառեա[13] վանքի պատմությունը սկսվել է Բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում։ Վանքի անունը[14] միայն մեկ ան-

---

[11] Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 403–405, Լ. Տեր-Պետրոսյան, Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ.–ԺԳ. դարերում, Հայագիտական մատենադարան «Բազմավէպ», հմր. 28, Վենետիկ, 1989, Է. Շիրինյան, Դպրությունը Կիլիկյան Հայաստանի Սեւ լեռան հայկական վանքերում, ԲՄ, 21, Երեւան, 2014, էջ 351–362, «Ղեւոնդ Ալիշանը Սեւ լեռան վանքերի մասին», Հ. Ղեւոնդ Ալիշան – 200, հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երեւան, 2021, էջ 70–81։

[12] Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 66, Հ. Ոսկեան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 281–283։

[13] Շուղր խանթարյա անվամբ լեռնանցք կա Կիլիկիայում։ Այսպես է կոչվում Զեյթունի միջնաբերդի հարավային ստորոտի նեղ ձորահովիտը Շուղր կամրջի հետ միասին, տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին Թ.Հակոբյան, Ս.Մելիք-Բախշյան, Հ.Բարսեղյան, հտ. 4, Երեւան, 1998, էջ 158–159։ Շուղր անունով բերդ։

[14] Ղ.Ալիշանի կազմած՝ Սեւ լեռների վանքերի ցանկում Շուխր խանդառեա անունը հիշատակված է թեական՝ «Շուխրաւանդորեայ» ձեւով (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 66)։

գամ հիշատակվում է 1064 թ. օրինակված մատյանի գրչի հիշատակարանում։ Գրչագիրը Սեւ լեռների գրչության կենտրոններից մեզ հայտնի ամենավաղ թվագրված ձեռագիրն է։ Հայտնի չէ՝ հոգեւոր կառույցը պատկանել է ասորիներին, հույներին, թե հայերին։ Անհայտ է նաեւ, թե վանքում գործունեության ինչ միջավայր է տիրել։ Տեղանունից դատելով՝ կարծում ենք, Շուխր խանդառեա վանքը նախկինում ասորական է եղել, հիմնարկվել եւ գործել է հավանաբար ԺԱ. դարասկզբից, որը հետո հայերը վերածել են հայկական հոգեւոր եւ գրչական կենտրոնի[15]։ Հ. Ոսկյանի կարծիքով՝ վանքը «թերեւս օտար ազգի մը պատկան, ուր սակայն գտնուած են հայ միաբաններ այս՝ ինչպէս այսօր՝ այդ շրջաններուն ալ անսովոր չէր»[16]։

Ըստ հիշատակարանային վկայության՝ Շուխր խանդառեա վանքը գործել է «ընդ հովանեաւ Սուրբ Սիովնի»[17]։ Վանքի կառուցման վայրը, աշխարհագրական միջավայրը, «Սուրբ Սիոն» եկեղեցու շինության հանգամանքները պարզելու համար որեւէ տեղեկություն չի հաղորդվում։ Թերեւս տեղորոշման մասին միակ վկայություն կարելի է դիտարկել վանքի անունը։ «Շուղր» տեղանունը ասորական ծագում ունի. «սաղր» ասորական բառի կամ «շաղր» արաբական բառի հոգնակի ձեւն է՝ «շուղր», «շուղուր», եւ նշանակում է «անցք», «կիրճ», «ճեղք», «սահման»[18]։ Այս ստուգաբանությունից կարելի է ենթադրել, որ վանքը կառուցվել է կիրճի մեջ կամ նրան հարակից տարածքում։

Պատմականորեն Շուղր անունը կրում են Լեռնային Կիլիկիայում իրար մոտ գտնվող երկու վանք։ Մեկը կառուցվել է Ադանայի Մարաշի գավառում, Շուղր գյուղի մոտակայքում, Շուղր կիրճի մոտ[19]։ Իսկ երկրորդը Շուղրի Կարմիր վանքն է, գտնվել է Գող Վասիլի[20] իշխանության տիրույթում՝ Քեսունի մոտ[21]։ Ուսումնասիրողները այս վանքերը երբեմն

---

[15] Ասորական սկզբնաղբյուրները հայտնում են, որ Կիլիկիայի եւ Հյուսիսային Ասորիքի մի շարք հայկական վանքեր ժամանակին պատկանել են ասորիներին (տե՛ս Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 45)։

[16] Հ. ՈՍԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 266։

[17] Եղմ. 1924, Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ.Զ., (այսուհետ՝ Յուցակ), Երուսաղէմ, 1972, էջ 400։

[18] Ասորական «Սաղր» բառաձեւը պահպանվել է Լամբրոնի մոտ Սաղրուի Ս.Աստվածածին վանքի անվամբ (տե՛ս Հ. ՏԷՐ-ՂԱՋԱՐԵԱՆ, «Շուղրի անապատը եւ Կարմիր վանքը», «Հայագիտական հասկ», Ա.տարի, Անթիլիաս, 1948, էջ 107–109)։

[19] «Հայաստանի եւ հարակից շրջանների...», հտ. 4, էջ 158, 159։

[20] ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. 5, Երեւան, 1962, էջ 55–56։

[21] Հայաստանի եւ «հարակից շրջանների...», հտ. 3, Երեւան, 1991, էջ 58։ Գրիգոր Վկայասերը վանքում գումարել է մեծ եկեղեցական ժողով (տե՛ս Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան,

շփոթել են։ Ղ. Ալիշանը գրում է. «Ոմն ընդ մէջ Մարաշոյ եւ Սսոյ ասէ, ոմն յերի Քեսնոյ, իսկ այլ ոմն ի հնոց՝ ստուգագոյն տայ նշան ըստ իւրում գիտութեան, «մերձ ի Նոր քաղաք» ասելով, այլ աւա՜ղ, զի անծանօթ է մեզ եւ տեղի Նորոյ քաղաքիդ»[22]։ Շուղր անապատը, ըստ Ղ. Ալիշանի, գտնվել է Սեւ լեռների «յամուր կողմանս»[23]՝ «յերկիր իշխանութեան Գող Վասիլի առ կռան Կիլիկիոյ ու Մարաշոյ։ Երկոցուն սոցին եւ լերանցս սահմանորդ էր հռչակագոյն մենաստանն Շուղր Անապատ»[24]։

Ներսես Շնորհալու վկայությունից հայտնի է դառնում, որ Շուղր վանքը գտնվել է Սեւ եւ Տորոս լեռների միացման հատվածում կամ սահմանագծում՝ «Մինչ ի Տաւրոս լեառն հասեալ/... Ի վայելուչ յայն վայր եկեալ/ Հովուապետին զգաւնացեալ,/ Ի Սեաւ՝ Մթին լեառն անուանեալ,/ Ուր են հոգիք լուսաւորեալ» կամ «Ի յանապատ իմն բնակեալ/ Ի մէջ լերանցն Շուղր անուանեալ»[25]։

Հ. Տեր-Ղազարյանը Շուղր վանքի տեղանքի մասին գրում է հետեւյալը. «Շուղրը կը գտնուի Անտէրունի լեռնադաշտին մէջ, Մարաշէն դէպի Սիս տանող ճամբուն վրայ, Ենիճէ Գալէ գիւղին մօտ՝... աւերակներով

էջ 407)։ Մատթեոս Ուռհայեցու համաձայն՝ Շուղր վանքում է թաղվել Բարսեղ Անեցի կաթողիկոսը (տե՛ս Մ Ա Տ Թ Ե Ո Ս Ո Ւ Ռ Հ Ա Յ Ե Ց Ի*, էջ 360։ «Յայսմաւուրքի» մեջ ասվում է. «...եւ ապա ինքն (Բարսեղ.– Հ.Բ.) վախճանեցաւ եւ թաղեցաւ անդէն ի Շուղրն՝ մօտ ի տէր Գրիգորիս» (տե՛ս* Գ. Հ Ո Վ Ս Է Փ Ե Ա Ն*, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (այսուհետ՝ Հիշ.), Անթիլիաս, 1951, էջ 421),* Մ. Զ Ա Մ Ջ Յ Ա Ն Ց*, Հայոց պատմութիւն, հտ. Գ., Երեւան, 1984, էջ 35։ Շուղր վանքին եւ նրա տեղադրությանն անդրադարձել են նաեւ Հ.Նալբանդյանը (տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին. Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ, կազմեց՝ Հ. Նալբանդյան, Երեւան, 1965, էջ 84, 180–181, ծան. 243), Ղ.Ինճիճյանը (տե՛ս* Ղ. Ի Ն Ճ Ի Ճ Ե Ա Ն*, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ եւ Ամերիկոյ, մասն առաջին. Ասիա, հտ. Ա., Վենետիկ, 1806, էջ 376), Հ. Գալուստյանը (տե՛ս* Հ. Գ Ա Լ Ո Ւ Ս Տ Ե Ա Ն*, Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 234, Ա.սրկ. Մանդալյան (տե՛ս* Ա. Մ Ա Ն Դ Ա Լ Յ Ա Ն*, Շուղր անապատի Կարմիր վանքը, «Էջմիածին», 1978, Ը.–Թ., էջ 91–98)։*

[22] Ղ. Ա Լ Ի Շ Ա Ն*, Սիսուան, էջ 406–407։*

[23] *«Գնաց յաշխարհն Կիլիկեցւոց ինքն կաթողիկոսն Բարսեղ, եւ եմուտ ի լեառն Սեաւ... եւ յայնմ ժամանակի հալածումն եհաս յաշխարհն Հայոց՝ յազգէն Իսմայէլի, եւ բազում գաւառք ու վանորայք աւերեցան, ու մնացեալքն փախստական լինէին յամուր կողմանս...» (տե՛ս* Ղ. Ա Լ Ի Շ Ա Ն*, Սիսուան, էջ 406, հմմտ.* Ա. Մ Ա Թ Է Ո Ս Յ Ա Ն*, Հիշ., էջ 171)։*

[24] Ղ. Ա Լ Ի Շ Ա Ն*, Սիսուան, էջ 406։*

[25] Ն Ե Ր Ս Է Ս Շ Ն Ո Ր Հ Ա Լ Ի*, Վիպասանութիւն, Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ., Երեւան, 2018, էջ 125, 127։ Շուղր անապատում է կրթվել Ներսես կաթողիկոսը. «Սոյն օրինակ եւ սա (Ներսես Շնորհալին.– Հ.Բ.) ի Սեաւ լերինն միայնարանս բնակէր միշտ պարապեալ ընթերցման Սուրբ գրոց եւ աստուածախօս աղօթից։ Եւ դադարեալ ի նոյն ճգնութիւն ամս բազումս՝ գայր յետ ժամանակի ի սահմանս Քերսոն քաղաքի առ աստուածասէր իշխանն Վասիլ մականուանեալն Գող» (տե՛ս* Ն Ե Ր Ս Է Ս Շ Ն Ո Ր Հ Ա Լ Ի*, Պատմութիւն Վարուց, Սոփերք, ԺԴ., Վենետիկ, 1854, էջ 29–30)։*

հարուստ փոքրիկ գիւղակ մը։ ...Շուղր գիւղին միջնաբլրակին վրայ շինուած է Շուղրի հռչակաւոր վանքը։ Մինչեւ մեր գաղթականութեան տարին Մայր եկեղեցին կամ վանքը կիսաւեր վիճակ մը կը ներկայացնէր, խորանին վրայի տանիքը դեռ հաստատուն կը կենար, բլրակին շուրջն ու ստորոտը բազմաթիւ հիւրանոցներ կը գտնուէին փլատակուած վիճակի մէջ...»[26]։

Շուղր վանքը նոյնացվել է Սեւ լեռների Բարսեղանց վանքի հետ։ Նման կարծիք է հայտնել հայագետ Դյուլորիեն[27]։ Ըստ Ղ. Ալիշանի՝ այս երկու վանքերը տարբեր վանական հաստատություններ են[28]։

Հակասական կարծիքներ կան նաեւ Շուղր անապատի եւ Շուխր Խանդառեա վանքերի վերաբերյալ. Գ. Հովսեփյանը նույնացրել է վանքերը, իսկ Հ. Տեր-Ղազարյանը դրանք դիտարկել որպես տարբեր կառույցներ[29]։ Առանց փաստական հիմքերի Հ. Տեր-Ղազարյանը գտնում է, որ Ս. Սիովնի վանքը գտնվել է Զեյթունի միջնաբերդի ստորոտում եւ «մինչեւ հիմա կը պահէ այդ անունը զեյթունցիներուն մոտ»[30]։ Կարծում ենք՝ Շուխր խանդառեա եւ Շուղր անվանաձեւերի տարբերությունը թույլ է տալիս վանքերը դիտել որպես տարբեր հոգեւոր կենտրոններ։

Շուխր խանդառեա վանքից մեզ հասած միակ ժառանգությունը վերը նշված Ավետարան մատյանն է[31]։ Մատյանը արժեքավոր է իր հնությամբ ու եզակի՝ որպես կարեւոր սկզբնաղբյուր։ Ձեռագիրը պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրատանը. այն նկարագրել են Ն. Պողարյանը եւ Գ. Հովսեփյանը[32]։ Ընդհանուր առմամբ գրչագիրը լավ է պահպանվել։ Մեծադիր մատյանը (97x27x10 սմ) կազմված է «թանձր» մագաղաթյա 282 թերթից, գիրը խոշոր երկաթագիր է, իսկ խորագրերն

---

[26] *Տե՛ս* Յ. Տէր-Ղազարեան, *Հայկական Կիլիկիա, 1966, Անթիլիաս, էջ 245։*

[27] Ղ. Ալիշան, *Սիսուան, էջ 407։*

[28] *Նույն տեղում։*

[29] *Տե՛ս* Գ. Յովսէփեան, *Հիշ., էջ 247։ Ղ.Ալիշանը վանքերը ներկայացրել է առանձին (տե՛ս* Ղ. Ալիշան, *Սիսուան, էջ 66)։*

[30] Յ. Տէր-Ղազարեան, *նշ. աշխ., էջ 245։ Մեկ այլ հոդվածում Յ.Տեր-Ղազարյանը բացատրում է «խանդառեա» բառի նշանակությունը. «Կանտառոյ, կամար... կամ աւելի շիտակը կամուրջ ըսել է» ու եզրակացնում, թե «ԺԱ.դարուն այժմու Զէյթունը ծանօթ էր միմիայն Շուխր խանդառիա անունով» (տե՛ս «Շուխր խանդառայի սուրբ Սիսովնի վանքը», «Բազմավէպ», հ. 10–12, 1952 թ., էջ 242)։*

[31] *Ղ.Ալիշանը իր ուսումնասիրություններում այս ձեռագիրը չի հիշատակում։*

[32] Ն. Պողարեան, *Յուցակ, էջ 397- 400,* Գ. Յովսէփեան, *Հիշ., էջ 245–248, Սիոն, 1933, էջ 415,* Ա. Մաթեւոսեան, *Հիշ., էջ 103–104։ Ձեռագիրը թվայնացված է (հղում՝* https://www.loc.gov/resource/amedmonastery.00271073987-jo/?sp=6*)։*

ու լուսանցքային համարագրերը՝ մանր անկյունավոր երկաթագիր, գրությունը՝ երկսյուն՝ սեւ թանաքով, ունի 19 տող։ Ձեռագիրը զարդարված է խորաններով, ավետարանիչների համատեղ նկարներով, հատվածների սկիզբը՝ կլոր կամ անկյունավոր գծազարդերով՝ երբեմն գունավորված։ Ն.Պողարյանը մատյանի նկարչական արվեստը գնահատել է «նախնական եւ ոչ նուրբ, բայց յոյժ շահեկան», իսկ Գ. Հովսեփյանը՝ «հնագոյն եւ պրիմիտիւ... տեղ տեղ սասանեան ոճով են»։ Հետաքրքիր է գրչագրում չորս ավետարանիչների նկարի ստորին լուսանցքում գրված անթվական հիշատակարանի գրչի՝ հավանաբար ձեռագրի գրչության ժամանակակցի հստակ գնահատականը. «Կարծեմ գրագիրն, որ գրեց զԱւետարանս, ինքն ոչ է հանել զայս պատկերնիս. եւ այս ստոյգ յերեւի, որ չեն սոքա շատ աղուորք»[33]։ Գ. Հովսեփյանը կարեւորել է Ավետարանի մանրանկարչությունը հատկապես «Հայաստանից դեպի Կիլիկիա անցնելու լուսաբանության համար», միաժամանակ նկատել «գրեթէ նոյնութեան աստիճանի» աղերսներ Խանդալի (1041 թ.), ՄՄ 3784 (1057 թ.) եւ 974 (ԺԱ. դար) ձեռագրերի մանրանկարչության հետ[34]։

Բուն ձեռագրի եւ հետին (Բ) կազմի միջեւ որպես պահպանակ տեղադրվել են ավելի հին մագաղաթյա երկաթագիր ձեռագրի երկու թերթ՝ գրված ժանգագույն թանաքով՝ մասամբ գունաթափ։ Հավանաբար մեծադիր ձեռագրեր օրինակելը բնորոշ է եղել այդ ժամանակաշրջանին։ Հայտնի չէ, թե պահպանակներն ինչ բովանդակությամբ բնագրի մասունքներ են եւ արդյոք մատյանը գրվել է Շուխր խանդառեա վանքում, թե այլ գրչության այլ կենտրոնում։ Ձեռագիրը հավանաբար պահվել է վանքի մատենադարանում։ Ավետարանը կաշեկազմ է, դրոշմազարդ՝ զարդարված արծաթե խաչով, ընկած արծաթե զարդերի մնացորդներով։

Ձեռագրի գլխավոր հիշատակարանը տեղեկացնում է գրչության հանգամանքների մասին։ Մատյանն ընդօրինակել է Ստեփանոս «զյոգնամեղ զաշխատաւորս»։ Համաձայն գրչի վկայության՝ Ստեփանոսը եղել է ոչ միայն «ցանկալի» ձեռագրի «զգրողս», այլ նաեւ «զգծաւղս»։ Ձեռագիրը արտագրվել է 1064 թ. «ի վանքս կոչեցեալ Շուխր խանդառեայ», Կոստանդին Տուկիծ բյուզանդական կայսեր կառավարման տարիներին (1059–1067 թթ.)՝ «յինքիշխանակալութեան Յունա[ն]ց թագա-

---

[33] *Տես* Ն. Պողարեան, *Յուցակ, էջ 398։*

[34] Գ. Յովսէփեան, *Յիշ., էջ 247։*

ւորին Տուկծի»[35]։ Հիշատակարանում կարդում ենք վանահայր Թումասի անունը՝ «գրեցաւ... յառաջնորդութեան հաւր Թումասու»[36]։

Գրչագրի պատվիրատուներն են «միախորհք եւ միակրաւնք, հարազատ» Հակոբ, Բաներեգես եւ Կիպրիանոս կրոնավորները՝ «սպասաւորք եւ ծառայք սուրբ Յակովբայ, որ եմք ընդ իշխանութեամբ Սանուիեղի որդւոյ Թոփիլծի, մեծանուն պատրկի եւ աստուածասէր եւ բարեպաշտ տիկնոջն Սկիր [Ս]անուիելի, որ ստացաք զսուրբ աւետարանս ի մեր յարդար վաստակոց յաստուածաձիր ընչից ի բարեխոսութիւն հոգւոց մերոց եւ մեր ծնողացն»[37]։

Ձեռագրի հիշատակարանը կարեւոր սկզբնաղբյուր է հատկապես Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի աթոռակալության տարիների ուսումնասիրության հարցում։ Ներկա հոդվածի նպատակից դուրս է վերոհիշյալ հարցի ողջ պատմության քննությունը. կսահմանափակվենք միայն տվյալների ներկայացմամբ։ Ավետարանի հիշատակարանը հայտնում է, որ մատյանը գրվել է «ի հայրապետութեանն տեառն Գրիգորիսի»։ Հայտնի է, որ Պետրոս Գետադարձ եւ Խաչիկ Բ Անեցի կաթողիկոսներից հետո հայրապետ է ընտրվել Գրիգորիսը՝ Գրիգոր Վկայասերը։ Թե՛ միջնադարյան հայ ժամանակագիրները, թե՛ արդի հետազոտողները[38] տարբեր տարեթվերով են թվագրում Գրիգոր Վկայասերի եւ

---

[35] *Պատմիչները ներկայացնում են Տուկիծի վարած քաղաքականությունը ոչ քաղկեդոնականների հանդեպ. «Յարուցանէր հալածանս քրիստոնէից. եւ առնէր քննութիւն հաւատոյ եւ կամէր ամենայն ջանիւ դարձուցանել զՀայոց քրիստոնեայքն ի դաւանութիւն Քաղկեդոնի» (տե՛ս Տարեգիրք Սմբատայ սպարապետի, Փարիզ, 1859, էջ 75)։ Մատթեոս Ուռհայեցին հայտնում է. «Կոստանդին Տուկիծ կայսր, որ իր իշխանութեան առաջի օրէն խորհեցաւ խորհուրդ չար, եւ կամեցաւ բառնալ եւ խափանել զաթոռ հայրապետութեան սրբոյն Գրիգորի ի տանէն Հայոց» (տե՛ս* Մ Ա Տ Թ Է Ո Ս Ո Ւ Ռ Հ Ա Յ Ե Ց Ի՝ *էջ 164)։*

[36] Ն. Պ Ո Ղ Ա Ր Ե Ա Ն՝ *Յուցակ, էջ 400։*

[37] *Ձեռագրի հետագայի անթվական հիշատակագրություններից մեկը մատյանի «փրկաւորման» մասին է։ Հովհաննես երեցը հիշում է Կուգանին՝ «տուողին զԱւետարանս» եւ նրա դստերը, ով մատյանը փրկել է «ի Մանիքեցեցն եւ ի Թորքերոյն»։ Մյուս հիշագրությունը նորոգության մասին է. Բաբերդացի Մարտիրոսը նորոգել է տվել Ավետարանը՝ «ի հիշատակ ինձ մեղապարտիս եւ ծնողաց իմոց» (տե՛ս* Ն. Պ Ո Ղ Ա Ր Ե Ա Ն՝ *Յուցակ, էջ 400–401)։*

[38] Մ Ա Տ Թ Է Ո Ս Ո Ւ Ռ Հ Ա Յ Ե Ց Ի՝ *էջ 150–155,* Կ Ի Ր Ա Կ Ո Ս Գ Ա Ն Ձ Ա Կ Ե Ց Ի՝ *Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 89–100, Մանր ժամանակագրություններ.* XIII–XVIII *դդ., հ.* II, *կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, հտ. 2, 1956, էջ, 339,* G. DÉDÉYAN, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises, Etude sur les pouvoirs Arméniens dans le Proche-Orient Mediterraneen (1068–1150), vol. 1, Aux origines de l'Etat Cilicien: Philarete et les premiers Roubeniens, vol. 2, De L'Euphrate au Nil: Le reseau diasporique, Lisbonne, 2003. Ս Ա Մ Ո Ւ Է Լ Ա Ն Ե Ց Ի *եւ Շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթեւոսյանի, Երեւան, 2014, էջ 189–191,* Մ. Օ Ր Մ Ա Ն Ե Ա Ն՝ *Ազգապատում, հտ. Ա., Ս. Էջմիածին, 2001, էջ 1467,*

նրան նախորդող երկու կաթողիկոսների հայրապետության տարիների տեւողությունը։ Կարեւոր է արձանագրել, որ կաթողիկոսները իրար հաջորդել են ընդունված կարգով. կաթողիկոսը ընտրվում էր նախորդի մահից հետո[39]։ Այսպես, ներկայացնում ենք Պետրոս Գետադարձի (1019–1058 թթ.) եւ Խաչիկ Բ (1058–1064 թթ.) կաթողիկոսների աթոռակալության տարիների արձանագրված շեղումները. Պետրոս Գետադարձ՝ 1019/1020–1053/1054,1058 թթ., Խաչիկ Բ Անեցի՝ 1053/1054/1058–1063/1064/1065/1066 թթ.։ Ամենատարածված տեսակետի համաձայն՝ Գրիգոր Վկայասերը կաթողիկոսություն է ընդունել 1066 թ. եւ այս փաստը երբեմն մեքենայորեն տարածվել է հարցին առնչվող աշխատություններում եւ հոդվածներում։ Համաձայն ուսումնասիրվող հիշատակարանի հստակ թվագրված վկայության՝ Գրիգորը արդեն 1064 թ. հիշվում է որպես հայրապետ։ Հարկ է նշել, որ Գրիգոր Վկայասերի գահակալության տարիների հարցով զբաղվող հետազոտողների ուշադրությունից վրիպել է այս եզակի սկզբնաղբյուրը։

Այսպիսով, Գրիգոր Վկայասերը ընտրվել է հայրապետ ոչ թե 1066 թ., այլ 1064 թ., եւ կաթողիկոսությունը տեւել է 41 տարի (1064–1105 թթ.)։ Խաչիկ Բ. Անեցի կաթողիկոսը մահացել է ոչ թե 1066 թ., այլ 1063 կամ 1064 թ.՝ աթոռակալելով Պետրոս Գետադարձ կաթողիկոսի մահից հետո վեց տարի։ Ստացվում է, որ Խաչիկ Բ Անեցու մահվան եւ Վկայասերի հայրապետության ընտրության միջեւ տարիների ընդհատում չի եղել, եւ կաթողիկոսական աթոռի երկարաժամկետ թափուր մնալու մասին տեղեկությունները վիճարկելի են։

Շուխր խանդառեա վանքն իր արժեքավոր ձեռագիր հուշարձանով առանձնահատուկ տեղ ունի հայ գրչարվեստի պատմության մեջ։ Ենթադրելի է, որ վանքի գրատան գործունեության ընթացքում արտագրվել եւ նկարազարդվել են տարբեր բովանդակությամբ մատյաններ։ Այն հանգամանքը, որ վանքի գրիչները կատարել են այլ վանքերից ստացած ընդօրինակման պատվերներ, խոսում է նրանց հմտության ու ճանաչված լինելու մասին։

1470, 1479, 1488–1494, Հ. Բարթիկյան, Պետրոս Ա. Գետադարձ եւ Կոստանդին IX Մոնոմախ, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հտ. Ա., Երեւան, 2002, էջ 593–600, Ռ. Վարդանյան, *Հայոց տոնացույցը (4–18-րդ դարեր), Երեւան, 1999, էջ 561–563,* Վ. Թորոսյան, *Հայոց կաթողիկոսական իշխանությունը (ԺԱ. դարի կեսեր–ԺԲ. դարի սկիզբ), Երեւան, 2018, էջ 13–44 եւ ուրիշներ։*

[39] *Տես* Կ. Մաթեւոսյան, *Անին եւ անեցիները, Երեւան, 2021, էջ 34։*

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Բյուզանդիա, Անտիոք, Շուղր անապատ, Կարմիր վանք, Քեսուն, Կոստանդին Տուկիծ, Պետրոս Գետադարձ, Խաչիկ Բ Անեցի, Գրիգոր Վկայասեր:

РЕЗЮМЕ

История, духовно-просветительская и культурная деятельность армянских монастырей в Черных Горах Киликии является одной из наименее изученных областей арменоведения. Статья посвящена истории монастыря Шухр Хандарея, одного из монашеских культурных центров Черных Гор, и оценке наследия скриптория. Единственная рукопись, дошедшая до нас из монастыря Шухр Хандарея – Евангелие 1064 года, древнейшая датированная рукопись из скрипториев Черных Гор. Колофон рукописи – важный первоисточник для уточнения срока правления католикоса Григора II Вкаясера. Согласно наиболее распространенной точке зрения, Григор II возглавил католикосат в 1066 году. В памятной записи шухрской рукописи указана дата, согласно которой Григор II Вкаясер стал католикосом не в 1066 году, как считалось ранее, а в 1064, и занимал престол в течение 41-го года (1064–1105).

SUMMARY

The history, spiritual, educational and cultural activities of the Armenian monasteries in the Black Mountains of Cilicia is one of the least studied areas of Armenology. The article is devoted to the history of the monastery of Shukhr Khandarea, one of the monastic cultural centers of the Black Mountains, and to the assessment of the heritage of the scriptorium. The only surviving manuscript from the monastery of Shukhr Khandarea is the Gospel of 1064, the oldest dated manuscript from the scriptoriums of the Black Mountains.

The colophon of the manuscript is an important primary source for clarifying the term of the reign of Catholicos Gregory II the Martyrophile. According to the most widespread point of view, Gregory became the head of the Catholicosate in 1066. The colophon of the Shukhr Khandarea manuscript indicates a date, according to which Gregory the Martyrophile became Catholicos not in 1066, as it was considered earlier, but in 1064, and reigned for 41 years (1064–1105).